

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
Ընդունված է 2006 թվականի հուլիսի 7
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՉԱՆՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ
ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Սույն օրենքի նպատակը գույքի եւ եկամուտների հայտարարագրման միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եւ համայնքների լիազորված (այսուհետ՝ լիազորված) նկատմամբ ֆիզիկական անձանց ունեցած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության, հայտարարագիր ներկայացնողների (այսուհետ՝ հայտարարատու) գույքի եւ եկամուտների հայտարարագրման նկատմամբ հասարակության վստահության, կոռուպցիայի դեմ պայքարի գործունե կառուցակարգերի ապահովումն է:

Սույն օրենքը կարգավորում է ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքի եւ եկամուտների հայտարարագրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է հայտարարագրի ներկայացման, հայտարարատուների գույքի եւ եկամուտների վերաբերյալ տեղեկությունների ստացման կարգերը, ժամկետները, ինչպես նաեւ պատասխանատվությունն օրենքի խախտումների համար:

(1-ին հոդվածը փոփ. 24.10.07 ՀՕ-239-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 2. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

1. Ֆիզիկական անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրման հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով:
2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են պայմանագրերի նորմերը:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

ՀՈԴՎԱԾ 3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն օրենքով նախատեսված գույքի եւ եկամուտների հայտարարագիրը (այսուհետ՝ հայտարարագիր) հայտարարատուի գրավոր հայտարարությունն է՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող հայտարարագրման ենթակա գույքի, եկամուտների եւ դրանց ստացման աղբյուրների, հարկային արտոնությունների եւ լիազորված նկատմամբ պարտավորությունները հաշվարկելու եւ վճարելու մասին:
2. Հայտարարագրի ձեւը եւ լրացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն):
3. Հայտարարագիրը կարող է ունենալ հավելված: "Եկամտահարկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված տարեկան եկամուտների մասին հաշվարկը սույն օրենքով սահմանված հայտարարագրի հավելվածն է, որը "Եկամտահարկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներկայացնում են տարեկան եկամուտների մասին հաշվարկ ներկայացնող անձինք:

4. Բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված դեպքի, հայտարարագիրը ներկայացվում է հարկային տարվա համար, որն ընդգրկում է հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածը:

ՀՈՂՎԱԾ 4. ՀԱՅՏԱՐԱՐԱԲՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

1. Հայտարարագիրը հայտարարատու ֆիզիկական անձի կամ նրա կողմից օրենքով սահմանված կարգով լիազորված ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի կողմից լրացվում է գրիչով կամ մեքենագրական տեքստով կամ հաշվողական (համակարգչային) տեխնիկայի միջոցով:
2. Հայտարարատուն ստորագրում է հայտարարագրի լուրը էջերը:
3. Հայտարարատուի կողմից կատարված ուղղումները հավաստվում են վերջինիս ստորագրությամբ:
4. Հայտարարագրի լրացման ենթակա տվյալները հայտարարատուն պետք է լրացնի ամբողջությամբ, եթե այլ մասն նախատեսված չէ կառավարության կողմից:
5. Ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքը, սեփականատերերի համաձայնությամբ, հայտարարագրում է սեփականատերերից մեկը: Ընդհանուր համատեղ սեփականատերերից յուրաքանչյուրը հայտարարագրում արտացոլում է եկամտի այն մասը, որը փաստացի ստացել է ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի օտարումից կամ օգտագործումից (այդ թվում՝ որպես արտադրության միջոց օգտագործումից):
6. Ընդհանուր թափանցիկ սեփականության իրավունքով պատկանող գույքը յուրաքանչյուր հայտարարատու հայտարարագրում նշում է իր թափանցանի չափով:
7. Հայտարարատուն հայտարարագրում է իրեն եւ իր խնամարկյալին սեփականության (այդ թվում՝ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր թափանցիկ) իրավունքով պատկանող (այսուհետ՝ սեփականության իրավունքով պատկանող) գույքը եւ եկամուտները:
8. Արտարժույթով գումարը հայտարարատուն հայտարարագրում արտացոլում է արտարժույթի անվանական արժեքով:
9. Բնամթերային (ոչ դրամական) եկամուտը կամ գույքն արտացոլվում է կառավարության սահմանած կարգով:
10. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտը հայտարարագրում է Հայաստանի Հանրապետությունում եւ (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս ունեցած գույքը եւ (կամ) ստացած եկամուտը:
11. (11-րդ մասն ուժը կորցրել է 18.12.07 ՀՕ-300-Ն օրենք)
12. Սույն հոդվածի հինգերորդ, վեցերորդ եւ յոթերորդ մասերի դրույթները չեն տարածվում մազմամնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման եւ պահպանման համար նախատեսված այն տարածքների, շինությունների, գույքի եւ այլ գույքային իրավունքների վրա, որոնք ընդհանուր թափանցիկ սեփականության իրավունքով պատկանում են շինության լուր սեփականատերերին:

(4-րդ հոդվածը փոփ. 18.12.07 ՀՕ-300-Ն օրենք)

ԳԼՈՒԽ 3

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԸ, ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՍԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՈՂՎԱԾ 5. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒՆ

1. Սույն օրենքի համաձայն հայտարարատու է համարվում՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտը՝ Հայաստանի Հանրապետությունում եւ (կամ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս սեփականության իրավունքով իրեն պատկանող սույն օրենքով սահմանված գույք եւ (կամ) եկամուտ ունենալու դեպքում:

Սույն օրենքի իմաստով Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ է հանդիսանում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր եւ ավելի, կամ որի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Սույն օրենքի իմաստով կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված է ֆիզիկական անձի ընտանեկան կամ տնտեսական շահերի կենտրոնը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե այնտեղ է գտնվում տունը կամ մնակարանը, որտեղ մնակվում է նրա ընտանիքը եւ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

2) (1-ին մասի 2-րդ կետն ուժը կորցրել է 18.12.07 ՀՕ-300-Ն օրենք)

2. Անկախ սույն հոդվածի առաջին մասի դրույթներից, յուրաքանչյուր հարկային տարվա համար հայտարարագիր են ներկայացնում՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքական ու հայեցողական պաշտոն գրադեցնող անձինք.

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական լիարժեք նախագահը, նրա տեղակալը, խորհրդի անդամները եւ կենտրոնական լիարժեք ծառայողները.

3) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը, անդամները.

4) Հայաստանի Հանրապետության դատավորները, դատախազները, "Դատական ծառայության մասին", "Դատախազության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան դատական ծառայության գլխավոր եւ լիարժեք գույք պաշտոններ գրադեցնող անձինք.

5) "Դիվանագիտական ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան դիվանագիտական ծառայության գլխավոր հյուպատոսի եւ դրանից լիարժեք պաշտոն գրադեցնող անձինք.

6) Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահը, նրա տեղակալը, խորհրդի անդամները.

7) Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահը, տեղակալները, կառուցվածքային եւ տարածքային ստորաբաժանումների ղեկավարները.

8) Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների) ղեկավարները (նրանց տեղակալները) եւ անդամները.

9) քաղաքացիական, հարկային, մաքսային, դատական ակտերի հարկադիր կատարման, ոստիկանության, ազգային անվտանգության, քրեակատարողական,

փրկարար ծառայություններում, Հայաստանի Հանրապետության պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում ծառայության մեջ գտնվող անձինք: Ընդ որում, հայտարարագիր ներկայացնում են՝

ա. քաղաքացիական ծառայության պաշտոններ գլխավորողներից՝ քաղաքացիական ծառայության թափուկային և գլխավոր պաշտոններ գլխավորող անձինք,

բ. հարկային ծառայողները,

գ. մաքսային ծառայողները,

դ. դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողները,

ե. ոստիկանության ծառայության պաշտոններ գլխավորողներից՝ ոստիկանության թափուկային, գլխավոր, ավագ, միջին և դրանց հավասարեցված պաշտոններ գլխավորող անձինք,

զ. ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմններում պաշտոն գլխավորողներից՝ ազգային անվտանգության ծառայության թափուկային, գլխավոր և ավագ պաշտոններ գլխավորող անձինք,

է. քրեակատարողական ծառայության պաշտոններ գլխավորողներից՝

քրեակատարողական ծառայության թափուկային, գլխավոր և առաջատար խմբերի պաշտոններ գլխավորող անձինք,

ը. փրկարար ծառայության պաշտոններ գլխավորողներից՝ փրկարար ծառայության թափուկային, գլխավոր և ավագ պաշտոններ գլխավորող անձինք,

թ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում պաշտոն գլխավորողներից՝ այդ մարմնի ստորաբաժանումների ղեկավարները.

10) համայնքային ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններ գլխավորող անձինք.

11) "Եկամտահարկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված եկամտների մասին հաշվարկ ներկայացնող ֆիզիկական անձինք:

3. Հայտարարագիր են ներկայացնում նաև սույն հոդվածի երկրորդ մասի 1-10-րդ կետերում նշված հայտարարատուներին (այսուհետ՝ պաշտոնատար անձ)

փոխկապակցված անձինք: Սույն օրենքի համաձայն՝ փոխկապակցված անձինք են՝

1) պաշտոնատար անձի ամուսինը, համատեղ ապրող ծնողը և համատեղ ապրող չափահաս (18 տարին լրացած) չամուսնացած զավակը.

2) պաշտոնատար անձի ամուսնացած չլինելու և զավակ չունենալու

դեպքում՝ համատեղ ապրող ծնողը և համատեղ ապրող չափահաս (18 տարին լրացած) չամուսնացած քույրը և եղբայրը.

3) պաշտոնատար անձի ամուսնացած չլինելու և զավակ ունենալու

դեպքում՝ համատեղ ապրող չափահաս (18 տարին լրացած) չամուսնացած զավակը և համատեղ ապրող ծնողը:

4. Պաշտոնատար անձինք և նրանց փոխկապակցված անձինք հարկային տարվա համար հայտարարագիր են ներկայացնում, եթե պաշտոնատար անձը հարկային

տարում գոնե մեկ օր գլխավորել է սույն հոդվածի երկրորդ մասի 1-10-րդ կետերում նշված պաշտոններից որևէ մեկը: Պաշտոնատար անձինք հայտարարատու են նաև

գլխավորող պաշտոնից ազատվելու (պաշտոնավարության ավարտին) հաջորդող հինգ տարվա ընթացքում, իսկ նրանց փոխկապակցված անձինք՝ իրենց

փոխկապակցված պաշտոնատար անձանց պաշտոնից ազատվելուն

(պաշտոնավարության ավարտին) հաջորդող երկու տարվա ընթացքում:

5. Հայտարարատուն հայտարարագիրը ներկայացնում է իր հաշվառման, իսկ դրա լսարանային դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հիմնական մնակության վայրի (այսուհետ՝ հաշվառման վայրի) հարկային մարմին, լսարանային սույն հոդվածի վեցերորդ եւ յոթերորդ մասերում նշված դեպքերի:

6. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմիններում առանձին պաշտոններ զբաղեցնող անձանց համար կառավարությունը կարող է սահմանել հայտարարագրի ներկայացման այլ կարգ:

7. Հարկային մարմնի սահմանած դեպքում՝ հայտարարատուն հայտարարագիրը ներկայացնում է վերադաս հարկային մարմին:

(5-րդ հոդվածը փոփ. 18.12.07 ՀՕ-300-Ն օրենք)

ՀՈՂՎԱԾ 6. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՅՔԸ

1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի երկրորդ եւ երրորդ մասերում նշված հայտարարատուների համար հայտարարագրման ենթակա են հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝

1) այն անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, լսարանային տնկիւն, շենքը, շինությունը, հողին ամրակալված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքի նշանակությանն անհամաչափ վնաս պատճառելու (այսուհետ՝ անշարժ գույք), որը օտարվել կամ ձեռք է ձեռքվել հարկային տարում:

2) այն շարժական գույքը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անիվավոր, քրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը (այսուհետ՝ շարժական գույք), որը օտարվել կամ ձեռք է ձեռքվել հարկային տարում:

Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սմ, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ, ինչպես նաեւ տարբեր լեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները:

3) այն արժեթուղթը (պարտատոմսը, չեկը, մուրհակը, լսարանային Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը, քաղաքային լսարանային վկայագրի) եւ (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթուղթը (լսարանային, փայլալսարանային) (այսուհետ՝ արժեթուղթ եւ (կամ) այլ ներդրում), որը օտարվել կամ ձեռք է ձեռքվել հարկային տարում:

4) այն փոխառությունը, որը հայտարարատուն հանձնել է կամ նրան վերադարձվել է հարկային տարում: Սույն օրենքի իմաստով փոխառություն է համարվում հայտարարատուի կողմից այլ սուբյեկտի սեփականությանը դրամի (փոխառության գումարի) կամ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույքի հանձնումը՝ միեւնույն գումարի դրամ կամ ստացված գույքին հավասար քանակի եւ նույն տեսակի ու որակի գույքի վերադարձնելու պայմանով (այսուհետ՝ փոխառություն):

5) սույն մասի 1-4-րդ կետերում չնշված՝ 8 միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույքը (այսուհետ՝ թանկարժեք գույք), որն օտարվել կամ ձեռք է ձեռքվել հարկային տարում:

6) դրամական միջոցները (այդ թվում՝ լսարանային ունեցած):

2. Հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձինք եւ փոխկապակցված անձինք, սույն օրենքի համաձայն, ներկայացվող առաջին հայտարարագրում նշում են նաեւ սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքը, շարժական

գույքը, արժեթուղթը եւ (կամ) այլ ներդրումը, փոխառությունը եւ դրամական միջոցները (այդ թվում՝ լիցենզիայի ունեցած)՝ հարկային տարվա հունվարի 1-ի եւ դեկտեմբերի 31-ի դրությամբ:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածի երկրորդ եւ երրորդ մասերում չնշված հայտարարատուների համար հայտարարագրման ենթակա է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝

1) անշարժ գույքը, եթե հարկային տարում անշարժ գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 50 միլիոն դրամը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 50 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են անշարժ գույքի ձեռքբերման եւ օտարման լուր գործարքները:

2) շարժական գույքը, եթե հարկային տարում շարժական գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 8 միլիոն դրամը: Ընդ որում, ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 8 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են շարժական գույքի ձեռքբերման եւ օտարման լուր գործարքները:

3) արժեթուղթը եւ (կամ) այլ ներդրումը, եթե հարկային տարում արժեթղթերի ձեռքբերման եւ (կամ) այլ ներդրման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 8 միլիոն դրամը:

Ընդ որում, ձեռքբերման եւ (կամ) այլ ներդրման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 8 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են արժեթղթերի ձեռքբերման եւ (կամ) այլ ներդրման եւ օտարման լուր գործարքները:

4) փոխառությունը, եթե հարկային տարում փոխառության հանձնման գործարքների ընդհանուր գումարը (չափը) կամ վերադարձման գործարքների ընդհանուր գումարը (չափը) գերազանցել է 8 միլիոն դրամը: Ընդ որում, փոխառության հանձնման գործարքների ընդհանուր գումարը (չափը) կամ վերադարձման գործարքների ընդհանուր գումարը (չափը) 8 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են փոխառության հանձնման եւ վերադարձման լուր գործարքները:

5) թանկարժեք գույքը, որն օտարվել կամ ձեռք է մերվել հարկային տարում:

4. Սույն օրենքում նշված հայտարարագրման ենթակա գույքի գինը (արժեքը) կամ արտարժույթով եկամուտը որոշելիս արտարժույթի համարժեքը հաշվարկվում է՝ ելնելով գործարքի օրվա համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական լիցենզիայի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձեւավորված միջին փոխարժեքից, իսկ մնամթերքով իրականացրած գործարքի գինը (արժեքը)՝ ելնելով մնամթերային (ոչ դրամական) եկամուտը կամ գույքը հայտարարագրում արտացոլելու կարգով որոշվող գնից (արժեքից):

5. Գույքը հայտարարագրելիս պետք է նշվեն՝

1) անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, առկայությունը հարկային տարվա սկզբում եւ վերջում, ձեռքբերման կամ օտարման գինը (արժեքը) եւ արժույթը:

2) շարժական գույքի դեպքում՝ շարժական գույքի տեսակը, մակնիշը եւ սերիան, առկայությունը հարկային տարվա սկզբում եւ վերջում, ձեռքբերման կամ օտարման գինը (արժեքը) եւ արժույթը:

3) արժեքդրժի եւ (կամ) այլ ներդրման դեպքում՝ արժեքդրժի եւ (կամ) այլ ներդրման արժույթը, գինը (արժեքը) հարկային տարվա սկզբում եւ վերջում, ձեռքբերման կամ օտարման գինը (արժեքը).

4) փոխառության դեպքում՝ պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը եւ հայրանունը, հասցեն, փոխառության արժույթը, փոխառության գումարը (չափը) հարկային տարվա սկզբում եւ վերջում, հարկային տարում հանձնված եւ վերադարձված փոխառության գումարը (չափը).

5) թանկարժեք գույքի դեպքում՝ գույքի անվանումը, առկայությունը հարկային տարվա սկզբում եւ վերջում, գույքի ձեռքբերման կամ օտարման գինը (արժեքը) եւ արժույթը.

6) դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի արժույթը, չափը հարկային տարվա հունվարի 1-ի սկզբին եւ դեկտեմբերի 31-ի ավարտին:

(6-րդ հոդվածը փոփ. 18.12.07 ՀՕ-300-Ն օրենք)

ՀՈՂՎԱԾ 7. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՍԱՆ ԵՆԹԱԿԱ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԱՑՄԱՆ ԱԴԲՅՈՒՐՆԵՐԸ

1. Հայտարարատուն սույն օրենքով սահմանված կարգով եւ ժամկետում հայտարարագրում է հարկային տարում ստացած՝ սույն հոդվածով սահմանված եկամուտները եւ դրանց ստացման աղբյուրները:

Հայտարարատուի եկամուտների ստացման աղբյուր է հանդիսանում այն անձը, որը հարկային տարում հայտարարատուին վճարել է սույն հոդվածով սահմանված եկամուտ:

Մասնավորապես, եկամուտների ստացման աղբյուր կարող են հանդիսանալ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը, առետրային, ոչ առետրային կազմակերպությունը, հիմնարկը, մասնաճյուղը, ներկայացուցչությունը, անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ կազմակերպությունը) կամ անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով հարկերը եւ (կամ) պարտադիր այլ վճարները եկամտի ստացման աղբյուրի մոտ պահված լինելու դեպքում հայտարարատուն եկամուտները հայտարարագրում է առանց այդ գումարների: Սույնը չի տարածվում "Եկամտահարկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարեկան եկամուտների մասին հաշվարկ ներկայացնող անձանց վրա:

2. Սույն օրենքի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ մնամթերային (ոչ դրամական) ձեռով ստացված հետեւյալ եկամուտները՝

1) աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները.

2) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, սպրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի թանձեղից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների եւ տվյալների թափանցիկ համար ծրագրերի կամ արդյունաբերական, առետրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առետրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) եւ հեղինակային վարձատրությունը.

3) ստացված փոխառությունները (վարկերը) կամ տրված փոխառությունների (վարկերի) դիմաց ստացված տոկոսը եւ այլ հատուցումը.

4) շահաբաժինները.

- 5) խաղատներում կամ շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները)։
 - 6) մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները)։
 - 7) նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (մասցառության մ աշխատանքի, ծառայության տեսքով ստացած)։
 - 8) ժառանգության կարգով ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները)։
 - 9) ապահովագրական հատուցումները։
 - 10) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը։
 - 11) գույքը (մասցառության մ դրամական միջոցների) օտարելուց (այդ թվում՝ սույն օրենքի 6-րդ հոդվածում չնշված) ստացված եկամուտը։
 - 12) վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը։
 - 13) միանվագ վճարները։
 - 14) գույքային իրավունքներից ստացված եկամուտը։
3. Հայտարարագրման ենթակա են նաև սույն հոդվածի երկրորդ մասով չսահմանված այլ եկամուտները՝ նշելով դրանց տեսակները եւ ստացման աղբյուրները։
4. Եկամուտը հայտարարագրելիս պետք է նշվի՝
- 1) եկամտի տեսակը։
 - 2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը եւ հայրանունը, հասցեն։
 - 3) եկամտի չափը (գումարը)։
 - 4) եկամտի արժույթը։
- (7-րդ հոդվածը փոփ. 18.12.07 ՀՕ-300-Ն օրենք)

Գ Լ ՈՒ Խ 4

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈՂՎԱԾ 8. ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՍԿԵՏՆԵՐԸ

1. Հայտարարատուները հայտարարագրերը ներկայացնում են յուրաքանչյուր հարկային տարվա համար ոչ ուշ, քան հարկային տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը։
2. Մինչեւ հարկային տարին ավարտվելը գործունեությունը (եկամտի ստացման աղբյուրի) դադարեցնելու եւ Հայաստանի Հանրապետությունից մշտական մնակության մեկնելու դեպքում հայտարարատուն պարտավոր է հայտարարագիրը ներկայացնել ոչ ուշ, քան մեկնելուց մեկ ամիս առաջ։
3. Հայտարարատուն հայտարարագիրը կարող է ներկայացնել անձամբ կամ ուղարկել փոստով, օրենսդրությամբ էլեկտրոնային ստորագրության սահմանման դեպքում՝ էլեկտրոնային փոստի, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորագիր ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձի միջոցով։ Ուղարկելու դեպքում հայտարարագրին կից ներկայացվում է հայտարարատուի՝ անձը (ինքնությունը) օրենսդրությամբ սահմանված հաստատող փաստաթղթի պատճենը՝ հարկային մարմնի սահմանած կարգով։
4. Հայաստանի Հանրապետության այլ օրենքով գույքի կամ եկամուտների հայտարարագրի ներկայացման պահանջ սահմանված լինելու դեպքում այդ հայտարարագիրը ներկայացվում է տվյալ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետում։

ՀՈՂՎԱԾ 9. ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՉՆԵՐԿԱՅԱՑՆՈՂՆԵՐԸ

1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի երկրորդ եւ երրորդ մասերում չնշված ֆիզիկական անձը հայտարարագիր չի ներկայացնում, եթե միաժամանակ առկա են հետեւյալ պայմանները՝

1) հարկային տարվա ընթացքում գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքների չի իրականացրել կամ իրականացված գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքների ընդհանուր գները (արժեքները) չեն գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի երրորդ մասի 1-5-րդ կետերով սահմանված գործարքների գների (արժեքների) չափերը.

2) հայտարարագրման ենթակա դրամական (Հայաստանի Հանրապետության դրամով կամ Հայաստանի Հանրապետության դրամով եւ արտարժույթի դրամով արտահայտված համարժեքով կամ արտարժույթի դրամով արտահայտված համարժեքով) եւ գույքի տեսքով մնամթերային եկամուտները հարկային տարվա ընթացքում չեն գերազանցել 8 միլիոն դրամը:

(9-րդ հոդվածը փոփ. 18.12.07 ՀՕ-300-Ն օրենք)

ԳԼՈՒԽ 5

**ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՅՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՈՂՎԱԾ 10. ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ**

1. Կառավարության սահմանած կարգով եռամսյակը մեկ՝ հաշվետու եռամսյակին հաջորդող եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ, իրենց հաշվառման վայրի հարկային մարմին հայտարարագրման ենթակա գույքին առնչվող տեղեկություններ ներկայացնում գույքը հաշվառող կամ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող կազմակերպությունը, գույքի հետ կատարվող գործարքների փաստաթղթերը վավերացնող նոտարը:

2. Կազմակերպությունը հարկային մարմնի պահանջով պարտավոր է ներկայացնել տեղեկություններ ֆիզիկական անձանց հայտարարագրման ենթակա գույքի հետ կապված գործարքների վերաբերյալ՝ կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում:

ՀՈՂՎԱԾ 11. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

1. Կազմակերպությունները ֆիզիկական անձանց վճարված եկամուտների վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնին ներկայացնում են "Եկամտահարկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Ֆիզիկական անձինք կամ կազմակերպությունները պարտավոր են եկամուտ ստացած ֆիզիկական անձանց պահանջով տալ հաշվարկված եւ վճարված եկամուտների, իրականացված նվազեցումների եւ պահված եկամտահարկի վերաբերյալ հարկային մարմնի սահմանած տեղեկանք՝ հարկային մարմիններին ներկայացնելու համար:

3. Բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները հարկային մարմնին տրամադրվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՇՏՈՒՄԸ

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացրած տեղեկության մեջ սխալն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կազմակերպությունները հարկային

մարմին են ներկայացնում ճշտված տեղեկություն, մասնառությամբ այն ժամանակահատվածի, երբ հարկային մարմնի կողմից կազմակերպություններում իրականացվում են օրենքով սահմանված ստուգումներ:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՅՏԱՐԱՐԱՍՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԳՎԱԾ 13. ՀԱՅՏԱՐԱՐԱՍՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Հայտարարատուն իրավունք ունի՝

1) հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացնելու ճշտված հայտարարագիր՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում.

2) լրացուցիչ գրավոր մասնատրություններ ներկայացնելու հայտարարագրի կամ դրան կցված փաստաթղթերի վերաբերյալ.

3) չկատարելու հարկային ծառայողի՝ օրենքից չսխալ պահանջները կամ ցուցումները:

2. Հայտարարատուն ունի իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

ՀՈԳՎԱԾ 14. ՀԱՅՏԱՐԱՐԱՍՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայտարարատուն պարտավոր է՝

1) սույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել հայտարարագրեր.

2) հարկային մարմնի կողմից հսկողություն իրականացնելիս նրա պահանջով, կառավարության սահմանած կարգով, հիմնավորել հայտարարագրման ենթակա գույքի առկայությունը, դրա նկատմամբ սեփականության իրավունքը կամ եկամտի ստացման աղբյուրը եւ չափը.

3) կատարել իրավական ակտերով նախատեսված այլ պարտավորություններ:

ԳԼՈՒԽ 7

ՀԱՐԿԱՅԻՆ ՍԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՆՈՒՅԹՆԵՐԸ

ՀՈԳՎԱԾ 15. ՀԱՐԿԱՅԻՆ ՍԱՐՄՆԸ

Հարկային մարմինը՝

1) ընդունում է սույն օրենքի կիրարկումն ապահովող գերատեսչական նորմատիվ ակտեր.

2) վարում է հայտարարատուների հաշվառումը.

3) ապահովում է հայտարարագրերի հաշվառումը եւ պահպանումը.

4) կիրառում է սույն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները.

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառնություններ:

ՀՈԴՎԱԾ 16. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայտարարագրերում ներառված տվյալները, ինչպես նաև հայտարարատուների գույքի կամ եկամուտների վերաբերյալ տեղեկությունները, հարկային օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում, կարող են հիմք հանդիսանալ մյուջեի նկատմամբ հայտարարատուի պարտավորությունների հաշվարկման (վերահաշվարկման) համար:
2. Պաշտոնատար անձանց հայտարարագրերում ներառվող հրատարակման ենթակա տվյալների ցանկը եւ տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը:
3. Հարկային մարմինն ապահովում է սույն հոդվածի երկրորդ մասում չնշված տվյալների գաղտնիությունը: Այդ տվյալները հարկային մարմնի կողմից այլ անձանց են տրամադրվում հայտարարատուի՝ նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ:
4. Հայտարարագրում ներառվող հրատարակման ենթակա տվյալները, կառավարության սահմանած կարգով, տրամադրվում են մշտական անվանում, հերթական համար եւ ամսաթիվ ունեցող պարբերական թողարկումներով նյութական կրիչի վրա Հայաստանի Հանրապետությունում թողարկվող եւ տարածվող զանգվածային լրատվության միջոցներին, որոնց միեւնույն թվանդակությամբ օրինակների քանակը պակաս չէ երեք հազարից:
(16-րդ հոդվածը փոփ. 18.12.07 ՀՕ-300-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 17. ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է հարկային մարմինը՝ օրենքով սահմանված կարգով:
2. Հայտարարատուների ներկայացրած հայտարարագրերի տվյալների արժանահավատությունը ճշտելու նպատակով հարկային մարմինը, օրենքով սահմանված կարգով, կարող է գործարքի մյուս կողմի մոտ կատարել ուսումնասիրություն:

ՀՈԴՎԱԾ 18. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

1. Յուրաքանչյուր հայտարարատուի վերաբերյալ հարկային մարմինը վարում է անձնական գործ, որտեղ պահպանվում են հայտարարատուների վերաբերյալ տվյալները, հայտարարատուների հայտարարագրերը, դրանց վերաբերյալ տեղեկությունները, տեղեկանքները, լրացատրությունները կամ դրանց պատճենները եւ այլ փաստաթղթեր:
2. Հայտարարատուների անձնական գործերի պահպանման ժամկետները սահմանում է կառավարությունը:

ԳԼՈՒԽ 8

ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 19. ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 20. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ, ՈՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՉԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՎԵԼ ԵԿԱՄՈՒՏԸ

Հայտարարագիրը չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ հայտարարագիրը չներկայացնելու հետեւանքով չհայտարարագրված եկամտի 10 տոկոսի չափով:

Սույն տուգանքը չի կիրառվում, եթե՝

- 1) չհայտարարագրված եկամուտը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ առաջացնում է հարկային պարտավորություն.
- 2) չհայտարարագրված եկամուտը հարկվել է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով.
- 3) կառավարության սահմանած կարգով հիմնավորվում է եկամտի ստացման աղբյուրը եւ չափը:

ՀՈԴՎԱԾ 21. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ԵԿԱՄՈՒՏԸ ԹԱՔՑՆԵԼԸ ԿԱՄ ՊԱԿԱՍ ՑՈՒՅՑ ՏԱԼԸ ԿԱՄ ՉՍՏԱՅՎԱԾ ԵԿԱՄՈՒՏ ԿԱՄ ՍՏԱՅՎԱԾ ԵԿԱՄՏԻՑ ԱՎԵԼԻ ԵԿԱՄՈՒՏ ՆԵՐԱՌԵԼԸ

1. Հայտարարատուի ներկայացրած հայտարարագրում եկամուտը թաքցնելը կամ այն պակաս ցույց տալն առաջացնում է տուգանքի նշանակում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված եկամտի 10 տոկոսի չափով:

Սույն տուգանքը չի կիրառվում, եթե՝

- 1) թաքցված կամ պակաս ցույց տրված եկամուտը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ առաջացնում է հարկային պարտավորություն.
 - 2) թաքցված կամ պակաս ցույց տրված եկամուտը հարկվել է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով.
 - 3) կառավարության սահմանած կարգով հիմնավորվում է եկամտի ստացման աղբյուրը եւ չափը:
2. Հայտարարատուի ներկայացրած հայտարարագրում չստացված եկամուտ կամ ստացված եկամտից ավելի եկամուտ ներառելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ եկամտի 10 տոկոսի չափով:

ՀՈԴՎԱԾ 22. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Սույն օրենքի 10-րդ եւ 11-րդ հոդվածներով սահմանված կարգով տեղեկություններ չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր ֆիզիկական անձի վերաբերյալ չներկայացրած տեղեկության համար 5 000 դրամի չափով:

ԳԼՈՒԽ 9

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

ՀՈԴՎԱԾ 23. ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից, ընդ որում՝

- 1) հայտարարատուները սույն օրենքով սահմանված կարգով առաջին հայտարարագրերը ներկայացնում են 2008 թվականի համար՝ 2009 թվականի ապրիլի 15-ից ոչ ուշ.
- 2) սույն օրենքի 3-րդ հոդվածի երրորդ մասն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից.
- 3) կազմակերպությունները սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված եկամուտների վերաբերյալ առաջին տարեկան տեղեկությունները ներկայացնում են 2008 թվականի համար.
- 4) սույն օրենքի 22-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2007 թվականի հունվարի 1-ից.
- 5) Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողները 2007 թվականի հայտարարագրերը ներկայացնում են "Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի եւ եկամուտների հայտարարագրման մասին" Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հուլիսի 27-ի ՀՕ-212 օրենքով սահմանված կարգով:
 2. 2009 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել "Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի եւ եկամուտների հայտարարագրման մասին" Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հուլիսի 27-ի ՀՕ-212 օրենքը:
(23-րդ հոդվածը փոփ. 18.12.07 ՀՕ-300-Ն օրենք)
29 հուլիսի 2006 թվականի

ՀՕ-164-Ն

**"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
"22" մայիսի 2007 թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

19 ապրիլի 2007 թվականի N 555-Ն

ԲՆԱՄԹԵՐԱՅԻՆ (ՈՉ ԴՐԱՍՏԱԿԱՆ) ՁԵՎՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՍՈՒՏԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱԽԱՈՆ ԵԿԱՍՏՈՒՄ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՆԱՄԹԵՐԱՅԻՆ (ՈՉ ԴՐԱՍՏԱԿԱՆ) ԵԿԱՍՈՒՏԸ ԿԱՄ ԳՈՒՅՔԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ԱՐՏԱՑՈՒԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Եկամտահարկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածին եւ "Ֆիզիկական անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի իններորդ մասին ու 18-րդ հոդվածի երկրորդ մասին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել բնամթերային (ոչ դրամական) ձեռով ստացված եկամուտը ֆիզիկական անձանց համախառն եկամտում հաշվի առնելու, ինչպես նաեւ բնամթերային (ոչ դրամական) եկամուտը կամ գույքը ֆիզիկական անձի գույքի եւ եկամուտների հայտարարագրում արտացոլելու կարգը` համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի հուլիսի 2-ի "Բնամթերային (ոչ դրամական) ձեռով ստացված եկամուտները ֆիզիկական անձանց համախառն եկամտում հաշվի առնելու կարգը հաստատելու մասին" N 590 որոշումը:

3. Սահմանել, որ հարկային մարմնում հայտարարատուների անձնական գործերը պահվում են հայտարարատուի մահվան տարվան հաջորդող 5 տարվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

(որոշումը փոփ. 04.09.08 թիվ 1011-Ն որոշում)

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ

Հավելված
ՀՀ կառավարության
2007 թվականի ապրիլի 19-ի
N 555-Ն որոշման

ԿԱՐԳ

ԲՆԱՄԹԵՐԱՅԻՆ (ՈՉ ԴՐԱՄԱԿԱՆ) ՁԵՎՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՍՈՒՏԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՉԱՆՑ

ՀԱՄԱԽԱՈՒՆ ԵԿԱՍՏՈՒՄ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՆԱՄԹԵՐԱՅԻՆ (ՈՉ ԴՐԱՄԱԿԱՆ) ԵԿԱՍՈՒՏԸ ԿԱՄ ԳՈՒՅՔԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՉԻ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ԱՐՏԱՑՈՒԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է բնամթերային (ոչ դրամական) ձեռք ստացված եկամուտը ֆիզիկական անձանց համախառն եկամտում հաշվի առնելու, ինչպես նաև բնամթերային (ոչ դրամական) եկամուտը կամ գույքը ֆիզիկական անձի գույքի եւ եկամուտների հայտարարագրում արտացոլելու կարգը:

2. Բնամթերային (ոչ դրամական) եկամուտներ կամ գույք կարող են լինել՝

1) գույքի (բացառությամբ դրամական միջոցների) տեսքով.

2) աշխատանքի, ծառայության տեսքով.

3) մտավոր սեփականության արդյունքի տեսքով:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկերը կամ պարտադիր վճարները եկամուտ վճարողի կողմից պահված լինելու դեպքում հայտարարագրում արտացոլվող բնամթերային եկամուտը կամ գույքը չի ներառում պահված հարկերը եւ պարտադիր վճարները: Այն դեպքերում, երբ եկամուտ վճարողը հարկի կամ պարտադիր վճարի պահում չի կատարել, հայտարարագրում բնամթերային եկամուտը կամ գույքն արտացոլվում է ամբողջ ստացած գումարով:

4. Բնամթերային եկամուտը ֆիզիկական անձանց համախառն եկամտում, ինչպես նաև բնամթերային եկամուտը եւ գույքը ֆիզիկական անձի գույքի եւ եկամուտների հայտարարագրում համապատասխանաբար հաշվի առնվում եւ արտացոլվում են Հայաստանի Հանրապետության դրամով, ազատ (շուկայական) գներով՝

1) կազմակերպություններից եւ անհատ ձեռնարկատերերից (այդ թվում՝ հարկային գործակալներից) ստանալու դեպքում՝

ա. կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտի վճարման կամ փոխառության վերադարձման ամսում այլ անձանց՝ դրանց իրացման միջին գներով այդ թվում՝ օրենքով սահմանված դեպքերում՝ անուղակի հարկերը),

բ. այդպիսի գների բացակայության դեպքում՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից վճարմանը կամ փոխառության վերադարձը նախորդող ամսում այլ անձանց՝ դրանց իրացման միջին գներով (այդ թվում՝ օրենքով սահմանված դեպքերում՝ անուղակի հարկերը),

գ. այդպիսի գների բացակայության դեպքում՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ դրանց ինքնարժեքի (սկզբնական (ձեռքբերման) արժեքի) եւ դրան կատմամբ օրենքով սահմանված դեպքերում անուղակի հարկերի հանրագումարով.

2) այլ աղբյուրներից ստանալու դեպքում՝

ա. այդպիսի կամ նույնանման գործարքների (բնամթերի՝ ապրանքների, ծառայությունների, այլ ակտիվների) համար եկամտի ստացման կամ փոխառության վերադարձի ամսվան վերաբերող հրապարակված վիճակագրական գները (սակագները),

բ. դրանց բացակայության դեպքում՝ այդպիսի կամ նույնանման գործարքների համար եկամտի ստացմանը կամ փոխառության վերադարձմանը նախորդող ամսվան վերաբերող հրապարակված վիճակագրական միջին գները (սակագները),

գ. դրանց բացակայության դեպքում՝ այդպիսի կամ նույնանման գործարքների համար եկամտի ստացմանը կամ փոխառության վերադարձմանը նախորդող 12 ամսվան վերաբերող հրապարակված վիճակագրական միջին գները (սակագները), իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդ 12 ամսվան նախորդող հաջորդական առաջին ամսվան վերաբերող հրապարակված միջին գները (սակագները),

դ. վիճակագրական միջին գնի բացակայության դեպքում բնամթերային եկամուտը կամ գույքը հայտարարագրում արտացոլվում է եկամտի ստացման կամ փոխառության հանձման տարում այն ձեռք բերելու հնարավոր գնով: Սույն կարգի առումով բնամթերային եկամտի ստացման կամ փոխառության հանձման հնարավոր գին է համարվում այն գինը, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար, կամ այն գինը, որով գույքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող եւ այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը համաձայն է վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող եւ այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը համաձայն է այդ գույքը ձեռք բերել:

Այդ նպատակով կիրառելի են, մասնավորապես, առուվաճառքով զբաղվող սուբյեկտների (բրոքերների, մասնագիտացված խանութների, բորսաների, մասնագիտացված տոնավաճառների, շուկաների եւ այլն) գները (սակագները), գնացուցակային (կատալոգային) գները, այդ թվում՝ նաեւ համապատասխան դեպքերում "Ինտերնետ" համաշխարհային ցանցի միջոցով ստացված տվյալները, ինչպես նաեւ նույնանման գույքի աճուրդային կարգով իրացման ձեւավորված նախադեպային տվյալները:

5. Մտավոր սեփականության արդյունքի տեսքով ստացված եկամուտը սույն կարգի 4-րդ կետում նշված կարգով հաշվի առնելու անհնարինության դեպքում՝ մտավոր սեփականության արդյունքի տեսքով եկամուտ ստացողն այն հաշվի է առնում Հայաստանի Հանրապետության դրամով՝ ինքնուրույն:

6. Սույն կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքերում բնամթերային եկամուտը կամ փոխառության վերադարձը հայտարարագրում արտացոլվում է կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի տրամադրած տեղեկանքի հիման վրա:

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ
ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասին և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել՝

1) ֆիզիկական անձի գույքի և եկամուտների հայտարարագրի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ֆիզիկական անձի տարեկան եկամուտների մասին հաշվարկը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ֆիզիկական անձի գույքի և եկամուտների հայտարարագրի լրացման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների ու նրանց փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրի ձևերը, դրանց լրացման և պահպանման կարգերը հաստատելու մասին» N 27 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2008 թ. սեպտեմբերի
Երևան